



ԵՐԱՊՈՒՇԱԲԹԻ, 14 ՅՈՒՆԻՈՒՆ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 36

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻԻՆԸ

Տէր, քու սերդ երկինքին պէս անսահման է,
հաւաքարմութիւնդ՝ մինչեւ ամպերը կը հասնի:
Արդարութիւնդ լեռներուն պէս բաձր է,
դաբաստաններդ՝ ովկիանոսներուն պէս խորունկ:
Դուն է որ կը հոգաս
մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէր:
Ինչ թանկագին է հոգածութիւնդ, ով Աստուած.
բոլոր մարդիկ քու թելերուդ հովանիին կ'ապաւինին:
Քու փաճարիդ առաքլ օրհնութիւններով կը լիացնես զանոնք,
շնորհքներու քու գեպէդ խմել կու տաս դուն անոնց:
Որովհետեւ դուն ես կեանքի աղբիւրը.
լոյսովդ է որ մենք լոյսը կը տեսնենք:
Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝
որոնք քեզ կը ճանչնան,
եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Գ ՆԱՄԱԿ
ԳԼՈՒԽ 1:1-15

ԳԱՅԻՈՍԻ ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ (1:3-8)

Յովհաննէս Առաքեալ, իր առաջին եւ երկրորդ ընդհանրական նամակները ուղղուած ընդհանրական հաւաքացեալներուն, իսկ հետաքրքրականօրէն իր Գ նամակը ուղղուած անձի մը՝ Գայիոս անունով, փեղոյն եկեղեցոյ առաջնորդին, անոր ցուցաբերած օգնութեան համար, որ ուրիշ բան չէ եթէ ոչ ճշմարիտ քրիստոնէայ հաւաքացեալի մը սիրոյ եւ հաւաքքի արտայայտութիւնը:

Ճիշդ է, նամակը որ կը կարդանք ուղղուած է անձի մը, սակայն, խորքին մէջ ուղղուած է իւրաքանչիւր հաւաքացեալ քրիստոնէայի եւ ընդհանրապէս քրիստոնէայ եկեղեցոյ: Որովհետեւ այն ինչ որ Գայիոս կը կարարէ սերէն եւ հաւաքքէն մղուած, սա կը նշանակէ, իւրաքանչիւր հաւաքացեալ, ինչու չէ նաեւ եկեղեցին նոյն սիրով եւ հաւաքքով մղուած նոյն վերաբերմունքը ունենալու է: Անոր համար ալ, երբ կը սերտենք Աստուածաշունչը, խորքին մէջ ուրիշ բան չենք ըրած ըլլար եթէ ոչ ճիշդ այդ քրիստոնէական սերը ունենալու մեր մէջ եւ դրսեւորելու մեր շրջապարհին: Ահա ճիշդ արոր համար ալ Քրիստոս մարմնացաւ, այդ սերը ցոյց տալու, եւ այդ սերէն կաթիլ մը սեր մեզի շնորհելու, որպէսզի անով ճանչցուինք իբրեւ իրեն ճշմարիտ ու հաւաքարիմ աշակերտներ: Ի՞նչ է որ կը կարարէ սերէն եւ հաւաքքէն մղուած՝ հիւրասիրութիւն հաւաքացեալ եղբայրներուն, նոյնիսկ՝ անձանօթներուն:

Որքան ալ Գայիոս անունը ընդհանրացած անուն մըն էր անցեալին, սակայն այսօր իւրայայտուկ է, երբ Յովհաննէս Առաքեալ իր նամակը կը սկսի, ոչ թէ պարզապէս ըսելով. «Քեզի կը գրեմ, Գայիոս», այլ՝ «Քեզի կը գրեմ, իմ սիրելի Գայիոս», մտերմութեան, հարազատութեան մէկ արտայայտութիւն մըն է, որ կը ցուցաբերէ Առաքեալը: Իսկ այս վերաբերմունքը կ'երթայ ոչ թէ միայն Գայիոսին, այլ Գայիոսի ճամբով հաւաքացեալներուն: Եւ այս սերը որ հիմնուած է ճշմարտութեան վրայ որ կայ Յիսուս Քրիստոսի մէջ: Այսինքն՝ մեր սիրոյ կապը ուրիշ բան չէ եթէ ոչ Քրիստոսով, եւ ոչ միայն մէկ անձին, այլ բոլոր անոնց նկատմամբ որ նոյն ճշմարտութեան մէջ կը մնան: Ահա այդ ճշմարտութեան մէջ խորութիւն չկայ:

Առաքեալը կը շարունակէ ըսելով. «Սիրելիս, կ'աղօթեմ որ բոլոր գործերուդ մէջ յաջողութիւն ունենաս եւ առողջ ըլլաս մարմնով, ինչպէս որ առողջ ես հոգիով» (2 հմր): Այսօր, Յովհաննէս Առաքեալի միտքն ու աղօթքը Գայիոսի գործերու յաջողութեան, ուրիշ բան չէ եթէ ոչ միւս հաւաքացեալներուն օգուտին, որոնց նկատմամբ իր սերը պիտի արտայայտէ Գայիոս զիրենք հիւրընկալելով: Ահա այս հատուածը այսօր մեզի մտածել կու տայ, թէ մենք այսօր արդեօք կ'աղօթենք մեր հաւաքացեալ եղբայրներուն եւ քոյրերուն գործերուն յաջողութեան համար, եւ կամ թէ ընդհակառակը այդ բոլորը կը դիպենք նախանձով եւ կասկածով: Մանաւանդ երբ այդ աղօթք զիրենք պիտի առաջնորդէ, որ իրենց փրուած յաջողութիւնը օգտագործեն ուրիշներու բարօրութեան համար: Ահա ճիշդ այդ նպատակին համար ալ Աստուած Ինք այդ յաջողութիւնը կու տայ, որպէսզի ունեցողը չունեցողին մասին մտածէ, եւ այսպիսով մարմնի անդամները իրարու նկատմամբ յոգածութիւն ունենալու համար:

Այս արտայայտութիւնը ահա Յովհաննէս Առաքեալի համար ուրիշ բան չէ եթէ ոչ. «Չկայ աւելի մեծ ուրախութիւն, քան լսել՝ թէ իմ որդեակներս ճշմարիտ հաւաքքին համաձայն կ'ապրին» (4 հմր): Մանաւանդ՝ երբ այդ հաւաքքին արտայայտութիւնը եղող գործերուն մասին վկայողներ ալ կան, նոյնինքն՝ հաւաքացեալ եղբայրները (3 հմր): Առաքեալը կը վստահեցնէ, թէ Գայիոսի այդ ըրածները հաւաքքին համաձայն է որ կ'ընէ, ոչ միայն հաւաքացեալ եղբայրներուն նկատմամբ, այլ նաեւ՝ անձանօթ եղողներուն (5 հմր): Յովհաննէս Առաքեալ կը թելադրէ որ շարունակէ այդ ծառայութիւնը անոնց նկատմամբ, որոնք յանձն առած են Քրիստոսի անունը տարածելու, այլ խօսքով՝ Աւետարանելու: Այդ ձեւով, կարծէք Գայիոս իր բաժինը բերած ըլլայ այդ առաքելութեան մէջ: